ՓՐԿԵ՛ՆՔ ԱՐՑԱԽԸ ԱՄՈՒՐ ՊԱՀԵՆՔ «ՄՀԵՐԻ ԴՈՒՌ»Ը

Ղարաբաղեան չարժման թէժ օրերին, երբ ազգովին ամբոխուած փողոցներում ու հրապարակներում գոչում էինք՝ «Ղարաբա՜ղ», մենք դիտակցում էինք, որ դժուար է լինելու այդ ուղին։ Եւ սակայն, ոչ մի դժուարութիւն չէր կարող մեզ ետ պահել պայքարի այդ ուղուց։ Ժողովուրդն արթնացել էր եւ փորձում էր թօթափել երկար տարիների թմբիրը։ Կային զգուշաւորներ, որոնք դեռ չէին ձերբազատուել մտայլ անցեալի վախից։ Սակայն նրանք էլ հետզհետէ միացան ընդհանուրին՝ ըմբռնելու ազգային գաղափարը։

Ազգային դիտակցութիւնը վերածուել էր քաղաքացիական խորը դիտակցութեան։ Մենք զգում էինք, որ ուժ ենք։ Ժայթքել էր հրաբուխը, որի առաջն առնել ոչ ոք չէր կարող։ Չէ՞ որ հսկայ ուրբութեան մէջ առաջինն էինք, որ համարձակուեցինք փչել բռնատիրութեան կապանքները։ Դա թէ՛ պարտաւորեցնող էր եւ թէ վառեցուցիչ։ Դիտէինք, որ բազմաթիւ փորձութիւններ ենք ենթարկուելու։ Եւ ենթարկուեցինք։ Բայց եւ դիմացանք։ Բարձր կազմակերպուածութեամբ ու ազգային արժանապատուութեան գիտակցումով անցանք բոլոր փորձութիւնների միջով։

Մեր հիմնական հաւաքատեղին՝ թատերական հրապարակը, զարձաւ քաղաքական մեր հասունացման իւրայատուկ դպրոցը։ Սերունդներն ուսեցին, հասակ առան այդ հրապարակում։ Ինձ թւում էր թէ մենք մինչ այդ միայն ֆիզիկական ներկայութիւն էինք ապահովել այս մեծ աշխարհում, իսկ հիմա փոխուել էր ամէն ինչ։ Մենք մասնակից էինք դառնում աշխարհի մեծագոյն իրադարձութիւններից մէկին։ Այո՛ն։ Մենք ելել էինք յեղաշրջիչ մի ամբողջ համակարգ, որն անյաղթելի էր համարուում։

Շատերի համար Ղարաբաղը հեռու մի տեղ դտնուող, անծանօթ, աշխարհագրական մի վայր էր։ Իսկ 88-ի Փետրուարից սկսած այն դարձաւ մեր մտահոգութիւնների կենտրոնը։ Եւ Մայր Հայրենիքի հետ Ղարաբաղի վերամիաւորման խնդիրը դարձաւ հրամայական։

❦

88-ի ամռանն էր, որ առաջին անդամ ուսուցիչների մի խմբով եղանք Ղարաբաղում։ Վերջապէս մօտիկից տեսանք հիանալուրջ Արցախն ու բազմաչարչար արցախահայութիւնը։ Ու ես այդտեղ էր, որ հասկացայ, թէ ինչո՛ւ են պոլսաները ու երզիչները այդքան ջերմ խօսքեր նուիրել Արցախցուն։ Երեւի եկել են ու տեսել իրենց հողին ու ջրին նուիրուած հայրենասէր այդ մարդկանց։ Հիացել են ու ոգեշնչուել նրանց հպարտ ու խիզախ ոգով, տակաւին եւ իրաւունքները երբեք չզիջելու նրանց պատրաստակամութեամբ։

Մեծ հաճոյք էր Արցախցիների հետ զրուցելը։ Նրանց խօսքից բխում էր իմաստութիւնն ու բաւականութիւնը։ «Մենք արդար ենք, քանի որ մեր պայքարն արդարացի է։ Մենք չենք խլել ուրիշի հողը, մենք միայն ուզում ենք պաշտպանել մեր հողը, մեր օջախը, մեր պատիւը»։

Տանհինգ օր շարունակ մենք վայելում էինք Արցախցիների անսահման հիւրասիրութիւնը։ Իւրաքանչիւր տուն մեզ ընդունում էր որպէս հիւրընկալութեամբ։ Զնայած դժուարին պայմաններին, մեզ հիւրընկալողները կարողացան ապահովել տեսարժան վայրերի մեր շրջայցը։

Զարմանալի կենսուրախ մարդիկ են Արցախցիները։ ապրում էին անտանելի պայմաններում, բաւարարուում ընչին պաշարով, բայց եւ ոչ մի դժգոհութիւն չէին արտայայտում։ «Այս է, որ կայ, պէտք է դիմանալ», – ասում էին նրանք։ Զմեռն անց էին կացնում գարնան յոյսով, ամառը՝ աշնան յոյսով։ Թւում էր թէ ինչ որ մի մեծ հաւատ էին նրանք խարսխել այդ հողում, եւ մի անտի ու անսահման համբերութիւն ամրարել իրենց սրտերում։

Ցանձին Ղարաբաղի ժողովրդի, ես կարծես երկար տարիներ մեզնից խլուած եւ խնամքով թաքցրած մի անդին դանձ էի յայտնաբերել։ Նրանց անհաւատ հայրենասիրութիւնն ու ամրակուռ կամքը ոգեւորում էին մեզ։ Հոգի կանչն էր երգում այդ մարդկանց երակներում։ Իսկ պատնէական օջախի ջերմութիւնը՝ սրբութիւն սրբոցը, պահպանում էր աչքի լոյսի պէս։

Ծովածաւալ համբերութեամբ լցուած Ղարաբաղցու սիրտը ներող էր ու հանդուրժող անդամ թշնամու նկատմամբ։ Դարերով իրար կողքի ապրած լինելով այլազգիների հետ, նրանք սովոր էին հարեւանութիւն անելու եւ մտքներով անդամ չէր անցնում, որ հարեւանը կարող էր ներխուժել իրենց աներն ու փչրել, մորթել, թալանել, բռնաբարել։ Այս ամէնի համար Ղարաբաղցին ունէր միայն մի պատասխան։ «Թէ՛ ոգամարդ են, թող դան մարդավարի կռուենք»։

Փոխէփոխ եկան ու գնացին դաժան ու բռնակալ դեներալներ։ Սակայն անատան մնաց զարաբաղցու անկոտրում կամքը։ Նա ոգի էր ելել պաշտպանելու ազգային ինքնորոշման իր իրաւունքը եւ ոչ ոք չէր կարող ստիպել նրան ետ կանգնելու իր պայքարից։

Ցիշում եմ մի դէպք, որ պատմեցին մեզ Ստեփանակերտում։ Պարեւային ժամի յայտարարման հետ կապուած արդէլ էին ժողովրդական համահաւաքները։ Իսկ ժողովուրդը չէր ուզում կորցնել հաւաքների ստեղծած համախմբումի մթնոլորտը, որն օրուայ հացից աւելի կենսական էր այդ օրերին։ Զինուորները, որ գտնուում էին Ստեփանակերտի քաղաքային հրապարակում, մտածում էին որ իրենց գործն ուսարտուած է, քանի որ նախօրօք յայտարարուած համահաւաքի ժամն էր եկել, իսկ հրապարակում իրենցից զատ ուրիշ մարդ չկար։ Մէկ – երկու լոպէ յետոյ նրանց ականջին են հասնում ծանօթ յանդաւոր կոչերը՝ «Հա՛-յա՛-ստա՛ն», «Մի՛-ա՛-ցո՛ւմ», «Ար-ցա՛խ»։ Ժամեր են անցնում, իսկ զինուորները այդպէս էլ չեն կարողանում յայտնաբերել ժողովրդի հաւաքի տեղը։ Իսկ ժողովուրդը՝ փակուած տներում, հերթով բացում է պատուհանները եւ գոչում յանդաւոր բառերը։ «Այնուամենայնիւ մեր համահաւաքը կայացաւ», – հպարտօրէն եզրափակեց պատմողը։

Ադերբէյնների նկատմամբ Ղարաբաղցիները ոչ թէ ոխակալութեամբ էին լցուած, այլ խղճահարութեամբ, ինչպէս որ միշտ պատահում է, երբ թոյլը խղճուկ քայլերի է դիմում ուժեղի նկատմամբ։ Պատմում էին մի զաւեշտական դէպք Ստեփանակերտի Ինտիտուտի մի ազերի դասախօսի մասին։ Երբ Հայերը, ի պատասխան Ադերբէյնների ջարդարար վայրագութիւնների, մեքենաներ էին յատկացրել ազերի դասախօսներին եւ ուսանողներին, որ խաղաղ կերպով հեռանան Ստեփանակերտից, նրանք գնացել, հասնուել էին Շուշիում։ Իսկ երեկոյեան, Մոսկուայի կենտրոնական հեռատեսիլը՝ պատահած որպէս Հայերի կողմից թոյլ տրուած բռնութեան փաստ ներկայացնելու համար ընտրել էր ազերի դասախօսներից մէկին, որ որքան կարող է գունեղ ներկայացնի դէպքը։ Վերջինս էլ, բնական է, ոչ մի փաստ չունենալով, սկսել էր փրփրալից բղաւել, թէ իբր Հայերը խուժեցին դասասենեակները եւ ասացին. – «Լէյ, ազերներ, ոչխարներ, դո՛ւրս կորէք այստեղից»։

Յաջորդ օրը հայ մասնաւորականներից մէկը հանդիպում է ազերի դասախօսին։ «Հիմա թէ դիպուկ ներկայացրեցիր ինքդ քո ազգին», – ասել էր նա։

Ակամայ յիշեցի մեր Լպսի հերոսներին։ Էպիկական կերպարներում խտացած գերբնական կամքն ու կորովն էի տեսնում ես Արցախցիների մէջ։ Դաւիթների ու Մհերների մի նոր Սասուն էինք յայտնաբերել կարծես։ Ես երջանիկ էի ու սրտով խաղաղուած։ Փայփայում էի այն միտքը, թէ Արցախը «Մհերի դուռ»ն է՝ սրբարան քարաժայռը, որից դուրս է եկելու վերջապէս Մհերը եւ ազատելու մեր աշխարհը։

Դժուար էր բաժանուելը Արցախից ու նրա ջերմաշունչ մարդկանից։ Մենք մեզ հետ տանում էինք հպարտ ու մի նուիրական յիշողութիւններ, կապուած այդ սուրբ հողի ու խորախորհուրդ ժողովրդի հետ։

❦

Իսկ այսօր անխնայ հոսում է Արցախցու արիւնը։ Կենաց ու մահու պայքարի է ելել Արցախցին եւ վճռահարար որդեգրել է «Ազատութիւն կամ մահ» կարգախօսը։ Ինձ համար անըմբռնելի է որոշ «հայրենակիցներ»ների անուրդայնն արամադրութիւնը Արցախի օգնութեան հարցում։ Մենք արդէն ունենք մեր գործող Խորհրդարանը Հայաստանում։ դրան մասնակցող կուսակցութիւններն ու խմբաւորումները կարող են սրտի ուզածի չափ վիճել եւ մրցակցել։ Ես չեմ կարծում թէ այսօր որեւէ մէկ կուսակցութեան պատիւ կը բերի՝ Արցախին կոգմակերպուած եւ համատեղ օժանդակելու փոխարէն, անխնայ հոսութեան սերմեր ցանել միմեանցից կարօտ մեր ժողովրդի մէջ։ Ասել է թէ մենք մեր թշնամու խորդաս ձեռքը բռնած օդնում ենք խոխանելու մեր ազգի զարաւոր երդիների իրականացումը։ Իսկ Արցախցին ունի միայն մէկ նպատակ եւ ծրագիր՝ փրկել Արցախը։ Եւ դա կարօտ է համայն հայութեան հոգատարութեան։

Փրկե՛նք Արցախը։ ամուր պահենք «Մհերի դուռ»ը։

ՀԻԼԴԱ ՄԵԼԻԲԵԱՆ

Լոս – Անճելես

Արժանիփիւնահայ նամակաւոր

Լ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

ԽՄԲ. – Թէեւ յապաղած, բայց եւ այնպէս կը հրատարակենք Պուէնոս – Այրէսի մեր աշխատակցին այս մանրամասն թղթակցութիւնը զոր նոր ստացանք։

❦

Յունիս 10 – 11-ին, Հայաստանի Նախագահ Լեւոն Տէր – Պետրոսեանի Արժանթին այցելութիւնը, թէեւ սահմանափակուած Պուէնոս – Այրէսին եւ 27 ժամուան տեւողութեամբ, «պատմական» որակումին արժանանալու բազմաթիւ յատկանիշներ ունեցաւ։

Ամէնէն կարեւորն է, մեր կարծիքով, պետական մակարդակի վրայ տրուած յատուկ կարեւորութիւնը։ Սկսելով օդակայանի մէջ ընդունելութենէն, ուր դիմաւորեցին Արժանթինի Նախագահ Գարլոս Մենէմ, Արտաքին Գործոց Նախարար Կիսս Տի Թելլա, Արդարութեան Նախարար Լէոն Արսլանեան, Պուէնոս – Այրէսի քաղաքապետ Գարլոս Կրոսս եւ Դրամի Տան (Հիպոթեկ դրամատան հետ) Նախագահ Արմանտս Կոստանեան, մինչեւ մեկնումը, Յունիս 11-ի երեկոյեան, Արժանթինի Նախագահի օգնականով դէպի Ռիօ Տը Ժանէյրո, մասնակցելու համար բնապահպանական գերատիճանին, ակներեւ էր հայկական պատուիրակութեան հանդէպ հոգածութիւնը։ Պէտք չէ մոռնալ, անշուշտ, արժանթինահայ համայնքի ներկայութիւնը, հայ պաշտօնատարներու զբաղած դիրքը, ինչպէս եւ, հաւանաբար Մայիս ամսուն Մենէմի այցելութիւնը Թուրքիա, ուր փորձած է խորացնել Արժանթինի հետ տնտեսական յարաբերութիւնները եւայլն։ Հայաստանի Նախագահի այցը զուգէ տակի եղած կ'ըլլայ «քաւելու» իր Թրքասիրական արտայայտութիւնները՝ յաչս Արժանթինահայերու։

Լեւոն Տէր – Պետրոսեանի այցելութեամբ, Արժանթին եւ Հայաստան տեղադրեցին երկու կարեւոր փաստաթուղթեր։ Համագործակցութեան ընդհանուր պայմանագիր, քաղաքական խորհրդակցութեան եւ մշակութային փոխանակման պայմանագիր։ Առաւեր – տնտեսական պայմանագիրը, որ նախօրօք ուղարկուած էր Արժանթինի Արտաքին Գործոց Նախարարութիւն, «կորսուած» է դիւանակալական լաբիւրինթոսներու մէջ եւ, ըստ հաստատեցումներու, չուրջ երկու ամիսէն ստորագրութեան պատրաստ պիտի ըլլայ։

Միւս կողմէ, Խորհրդարանի գոյ բա-

նրա ջերմաշունչ մարդկանից։ Մենք մեզ հետ տանում էինք հպարտ ու մի նուիրական յիշողութիւններ, կապուած այդ սուրբ հողի ու խորախորհուրդ ժողովրդի հետ։

❦

Իսկ այսօր անխնայ հոսում է Արցախցու արիւնը։ Կենաց ու մահու պայքարի է ելել Արցախցին եւ վճռահարար որդեգրել է «Ազատութիւն կամ մահ» կարգախօսը։ Ինձ համար անըմբռնելի է որոշ «հայրենակիցներ»ների անուրդայնն արամադրութիւնը Արցախի օգնութեան հարցում։ Մենք արդէն ունենք մեր գործող Խորհրդարանը Հայաստանում։ դրան մասնակցող կուսակցութիւններն ու խմբաւորումները կարող են սրտի ուզածի չափ վիճել եւ մրցակցել։ Ես չեմ կարծում թէ այսօր որեւէ մէկ կուսակցութեան պատիւ կը բերի՝ Արցախին կոգմակերպուած եւ համատեղ օժանդակելու փոխարէն, անխնայ հոսութեան սերմեր ցանել միմեանցից կարօտ մեր ժողովրդի մէջ։ Ասել է թէ մենք մեր թշնամու խորդաս ձեռքը բռնած օդնում ենք խոխանելու մեր ազգի զարաւոր երդիների իրականացումը։ Իսկ Արցախցին ունի միայն մէկ նպատակ եւ ծրագիր՝ փրկել Արցախը։ Եւ դա կարօտ է համայն հայութեան հոգատարութեան։

Փրկե՛նք Արցախը։ ամուր պահենք «Մհերի դուռ»ը։

ՀԻԼԴԱ ՄԵԼԻԲԵԱՆ

Լոս – Անճելես